



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԶՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բջնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բջնի, (0223) 6-25-21 kotayk-bjni@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2012թվականի N 19

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բջնի համայնքի ավագանու 2012թ-ի թիվ 7 հերթական նիստի օրակարգը.

1. Կոտայքի մարզի Բջնի համայնքի ավագանու 2011թ-ի դեկտեմբերի 14-ի թիվ 66-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Կոտայքի մարզի Բջնի համայնքի ավագանու 2011թ-ի հունվարի 14-ի թիվ 5 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
3. Կոտայքի մարզի Բջնի համայնքի 2012թ-ի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԻՐԵԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԲՈՂՈՅԱՆ ՄԱՍԻԿՈՆ

3. ԴԱՎԹՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

4. ՊԱՊՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԶՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բջնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բջնի, (0223) 6-25-21 kotayk-bjni@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2012թվականի N 20-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 66-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով՝ Բջնի համայնքի ավագանին որոշում է՝

1. Կոտայքի մարզի Բջնի համայնքի ավագանու 2011թ-ի դեկտեմբերի 14-ի <<ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԹԻՎ 66-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հաստատված բյուջեի եկամտային մասում՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարներից եկամտի «800.0» թիվը փոխարինել «1280.0» թվով

2) 01.1.1 օրենսդիր գործադիր մարմիններ պետական կառավարում ներքին գործուղումներ 4221 սինթետիկ հաշվի «100.0» թիվը փոխարինել «150.0» թվով

3) 01.1.1 օրենսդիր գործադիր մարմիններ պետական կառավարում աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների «4233» սինթետիկ հաշվի 0.0 թիվը փոխարինել «70.0» թվով

4) 01.6.1 Ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայություններ(այլ դասերին չպատկանող) սուբսիդիա ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին 4511 սինթետիկ հաշվի «8000.0» թիվը փոխարինել «8120.0» թվով:

5) 10.7.1 Սոց. Հատուկ արտոնությունների հուղարկավորության նպաստներ սինթետիկ հաշվի «300.0» թիվը փոխարինել «540.0» թվով: